ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՎԱՌՈՒՄ

Խոշոր բնակավայրերում կենտրոնացած քաղաքական, ընկերային-տնտեսական եւ մշակութային աշխույժ գործունեությունը վաղ միջնադարում (Դ.—Է. դդ.) փոխադրվեց ֆեոդալական դղյակներ, եկեղեցիներ ու գավառական բնակավայրեր։ Ընկերային-տնտեսական հարաբերությունների փոփոխությունները, քաղաքական անկայուն իրավիճակը, քաղաքների անկումը բնորոշ էին ոչ միայն Հայաստանին, այլեւ Պարսկաստանին, Բյուզանդական կայսրությանը, Փոքր Ասիային եւ Հյուսիսային՝ Մերձսեւծովյան շրջաններին[1] եւ պայմանավորված էին ընդհանուր ճգնաժամային իրավիճակով՝ նոր ավատատիրական հարաբերությունների ձեւավորմամբ եւ հաստատմամբ։ Սակայն եթե նշված տարածաշրջաններում անտիկ քաղաքները որոշ ժամանակ դեռ շարունակում էին գոյատեւել եւ վերջնական անկում ապրեցին միայն արաբական արշավանքների հետեւանքով, ապա Հայաստանում ընդհանուր տնտեսական անկայուն իրավիճակին գումարվեց նաեւ քաղաքական արտաքին գործոնը՝ Պարսից արքա Շապուհ Բ. 364—368 թթ. Հայաստան կատարած ավերիչ արշավանքները։ Այդ հարվածից հետո հայկական քաղաքները երկար ժամանակ չվերականգնվեցին։

Ուժեղ կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում, արտաքին թշնամու դեմ պայքարելու համար, մեծ քաղաքների փոխարեն ռազմավարական եւ առեւտրական կարեւոր հանգույցներում առաջացան մանր դղյակ-ամրոցներ (ամրոց-բնակավայրերից շատերն արդեն գոյություն ունեին նախորդ դարերից եւ միայն վերակառուցվեցին՝ հարմարեցվելով ժամանակաշրջանի պահանջներին)։

---

[1] Л. Чилашвили, Города феодальной Грузии, II, Тбилиси, 1970, с. 172—179; Д. Талис, Вопросы периодизации истории Херсона в эпоху раннего средневековья, Византийский Временник, XVIII, М., 1961, с. 54—73; А. Каждан, Византийские города в 7—11 вв., Советская Археология, т. 221, с. 164—188.

Կարելի է փաստել, որ վաղմիջնադարյան Արագածոտնում ամրոցների հզոր համակարգի առկայությունը Հայաստանում իշխող մասնատվածության եւ անապահովության մթնոլորտի վկայությունն է։

Ամրոցները, պաշտպանական ամուր շղթա ստեղծելով Արագածի հարավային հատվածով, ունեին Միջնաշխարհը վերահսկելու գործառույթ (աղ. 1, նկ. 1)[2]։ Միաժամանակ, յուրաքանչյուր ամրոց՝ իր շուրջ եղած ռազմական ավելի փոքր միավորներով, կազմում էր պաշտպանական առանձին օղակ՝ վերահսկելով որոշակի տարածք։

Արագածոտնի ամրոցների ուսումնասիրությունը կատարվել է 1970—1980-ական թթ. ԵՊՀ հայագիտական հետազոտությունների կենտրոնի հնագիտական արշավախմբի ու Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում։ Հետախուզական բնույթի պեղումներով եւ տեղազննությամբ հավաքված տվյալները թույլ տվեցին հնագետներ Բագրատ Սադոյանին[3], Եսայի Ասատրյանին[4] եւ Ճարտարապետ Լյուբա Կիրակոսյանին[5] կատարելու ամրոցների գործառութային եւ հատակագծային տիպաբանում։

Հիմք ընդունելով նախորդ ուսումնասիրողների կատարած հետազոտությունները՝ հոդվածում ամրոցները ներկայացնում ենք ըստ հատակագծային հորինվածքի՝ փորձելով անդրադառնալ նաեւ պաշտպանական համակարգում դրանց խաղացած դերին։

Ըստ հատակագծի՝ ամրոցները դասդասված են հետեւյալ խմբերի.

1. ուղղանկյունաձեւ հատակագծով ամրոցներ,

2. ռելիեֆին համահունչ հատակագծով ամրոցներ,

3. չորս անկյուններում կիսակլոր աշտարակներով դղյակ-ամրոցներ,

---

[2] Е. Асартян, Закари берд (результаты раскопок), Археологические раскопки в Армении, №19, Ереван, 2005, с. 81.

[3] Բ. Սադոյան, *Արագածոտնի վաղ միջնադարյան ամրոցների տիպաբանական տարբերակման փորձ, Հայկական ԽՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1989, էջ 79,* Բ. Սադոյան, *Հետախուզական պեղումներ Մաստարա գյուղի «Նախավկա» ամրոցում, Հայկական ՍՍՀ-ում 1979—1980 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1981, էջ 44—45։*

[4] Е. Асатрян, Закари берд (результаты раскопок), Археологические раскопки в Армении, №19, Ереван, 2005, с. 14—20, Ե. Ասատրյան, *Թալինի շրջանի հուշարձանները, Երեւան, 2004։*

[5] Л. Киракосян, Архитектура раннесредневековых крепостей-поселений, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата архитектуры, Ереван, 1992, Լ. Կիրակոսյան, *Արագածոտնի վաղմիջնադարյան ամրոց բնակատեղիների տիպաբանական վերլուծությունը, Արագածոտն. հոգեւոր եւ մշակութային ժառանգություն, գիտաժողովի հիմնադրույթներ, Ս. Էջմիածին Մայր տաճարի օծման 1700-ամյակ, Օշական, 2003, էջ 67։*

4. շրջանաձեւ հատակագծով ամրոցներ։

Ամրոցների անունները պատմական չեն։ Դրանք անվանված են կամ մոտակա բնակավայրի, կամ տվյալ շրջանի բնակիչներին հայտնի անուններով։

Ուղղանկյունաձեւ հատակագծով ամրոցներ

«Զաքարի բերդ»։ *Ամրոց-բնակավայրն Արագածոտնում նման հուշարձաններից առայժմ միակն է, որ պեղված է ամբողջությամբ (աղ. 1, նկ. 2)։ Ամրոցը գտնվում է պատմական Արագածոտն գավառի հյուսիսային հատվածում՝ Արագած լեռան հարավային լանջին, Թալինի Կաթնաղբյուր գյուղից 1,5 կմ հարավ։ Հուշարձանի պեղումները 1979 թ. սկսել է Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը, իսկ հաջորդ տարիներին շարունակել է ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի Կաթնաղբյուրի արշավախումբը՝ ընդհուպ մինչեւ 1988 թ. (ղեկ.՝ Ե. Ասատրյան)։*

Ամրոցի կառուցման վայրի ընտրությունը պայմանավորված է եղել պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ։ Այն տեղակայված է երկու ձորերի միախառնումից առաջացած եռանկյունաձեւ հրվանդանի վրա։ Ամրոց-բնակավայրի պեղումներն սկսվել են Երեւան-Գյումրի մայրուղու շինարարական աշխատանքներով պայմանավորված։ Կիրճերի միջեւ կամրջի կառուցման հետեւանքով ավերվել էր բնակավայրի կենտրոնական հատվածը, եւ պեղումները կենտրոնացվել են ավերումներից զերծ մնացած պարիսպների պարագծով։ Տեղանքի յուրօրինակությունից ելնելով՝ հետաքրքիր լուծումներ ունեն ամրոց-բնակավայրի պաշտպանական հանգույցները, որոնց դերը շատ կարեւոր է «Զաքարի բերդի» ճարտարապետական կերպարի ընկալման համար։ Պարիսպները ձեւավորում են երկու առանձին գոտիներ, որոնցից արտաքինն ընդգրկում է հրվանդանի ներքին եզրը։ Այն ձգվում է հարավարեւելյան ուղղությամբ՝ եզերելով ողջ բնակավայրը՝ բացառությամբ արեւմտյան հատվածի, ուր տեղանքը օժտված է բնական անառիկությամբ։ Պարսպի հաստությունը շուրջ 3 մ է։ Պարիսպների ներքին գոտին ընդգրկում է հրվանդանի վերին հատվածը՝ կրկնելով տեղանքի ուրվագիծը, որն ունեցել է հինգ աշտարակ։ Բացի աշտարակներից՝ պարիսպները լրացուցիչ ամրացվել են տարբեր չափերի ուղղանկյուն որմնահեցերով։ Ներքին գոտին բաժանված է չորս հատվածի՝ հարավային, արեւելյան, արեւմտյան եւ հյուսիսային,

որն ամրոց-բնակավայրի ամենախոցելի հատվածն է։ Դրանից ելնելով՝ 3 մ հաստությամբ պարսպին կցել են երկրորդը՝ հաստությունը հասցնելով 5,4 մ։ Պարիսպները կառուցված են ճեղքած կամ կոպիտ մշակված տուֆե մեծ խորանարդներով։ Պատերն ունեն երկու երես՝ շարված այսպես կոչված «զրահ» կամ «միդիս» եղանակով, իսկ բարձրությունը, հավանաբար, հասել է 6—7 մ։ Պարիսպների միջեւ ընկած տարածությունը բնակիչները հնարամտորեն օգտագործել են տնտեսական նպատակներով։ Պեղումներով բացվել է հացահատիկի 8 հոր՝ 10 մ³ տարողությամբ։

Ամրոցաշինության կարեւոր բաղկացուցիչներից էր մուտքի տեղի ընտրությունը, քանի որ այն հանդիսանում էր ամրոցի ամենախոցելի հատվածը։ Ամրոց-բնակավայր տանող մուտքը գտնվում էր հարավային պարսպի արեւմտյան հատվածում եւ ամրացված էր երկու աշտարակներով։ Բնակավայրի 3,3 մ լայնությամբ գլխավոր փողոցն սկսվում է անմիջապես մուտքից։ 12,5 մ երկարությունից հետո այն ճյուղավորվում է երկու փողոցի։ Պեղումները թույլ են տվել ենթադրել նաեւ երրորդ փողոցի առկայության մասին, որը, հավանաբար, գտնվել է բնակավայրի կենտրոնական հատվածում[6]։

«Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրի կառույցները բաժանվում են երեք խմբի. առաջին խումբը մեկ սենյականոց բնակելի համալիրներն են, որոնք օգտագործվել են որպես մթերքի պահեստարաններ։ Երկրորդ խմբին բնորոշ են իրար մոտ գտնվող երկու սենյակներից բաղկացած կառույցները՝ նախատեսված բնակվելու եւ մթերք պահելու համար։ Բնակելի համալիրների երրորդ խումբը բազմասենյականոց է եւ ունի մեկ մուտք։ Վերջինս նույնպես ունի բնակելի եւ տնտեսական գործառույթներ։ Տեղական ճեղքած կամ կոպտատաշ տուֆե խորանարդներով կառուցված սենյակները քառակուսի կամ ուղղանկյուն հատակագծով են։ Պատերը հիմնականում շարված են երկզրահ եղանակով, հանդիպում է նաեւ վաղ միջնադարին խիստ բնորոշ «եղեւնաշարը»[7]։

Պատերի համար որպես կապակցող նյութ է ծառայել հողով ու մանր քարերով լիցքը կամ կավաշաղախը։

Բացի վերը նշված բնակարաններից, ամրոց-բնակավայրի կենսագործունեության համար կարեւոր դեր են խաղացել նաեւ ժայռափոր կառույցները։ Բնակիչները հնարամտորեն օգտագործել են հրաբխային ծագում

---

[6] Е. Асатрян, Закари берд, с. 26.

[7] *Նշվ. աշխ., էջ 45։*

ունեցող հրվանդանի ողջ հնարավորությունները՝ կառուցելով ժայռափոր բնակարաններ, պաշտամունքային կառույցներ, ջրահեռացման առուներ, ճանապարհներ, աստիճաններ, գաղտնուղի, մսուրք, տնտեսական հորեր։

Այսպիսով, պեղումներով պարզվել է, որ «Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրի պաշտպանական եւ բնակելի համալիրները կազմել են փոխկապակցված մեկ համակարգ, ունեցել մեկ հզոր շինարարական հորիզոն ու կառուցվել նախօրոք մշակված նախագծով։ Ամրոց-բնակավայրն անսպասելիորեն լքվել է բնակիչների կողմից ու այլեւս չի բնակեցվել։ «Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրի ճարտարապետական եւ հնագիտական համակողմանի ուսումնասիրությունը եւ համեմատությունը Հայաստանի եւ հարեւան երկրների համանման բնակավայրերի հետ թույլ են տվել Ե. Ասատրյանին հուշարձանը թվագրելու Գ.—Ե. դդ.[8]*։*

Աշնակ։ *Բնակավայրը գտնվում է Թալինից արեւելք՝ նույնանուն դարավանդի վրա։ Աշնակի ամրոցների մասին առաջինը վկայում է Եղիշեն։ Խոսելով Վասակ Սյունու Հայաստան աշխարհում կատարած արքունի ձմեռանոցների ավերածությունների մասին՝ պատմիչը նշում է նաեւ Աշնակի զորակայանը*[9]*։ Այստեղ գտնվող ամուր պաշտպանական համակարգի գոյության մասին վկայում է մեզ հայտնի՝ վաղմիջնադարյան չորս ամրոցների առկայությունը։ Աշնակը հետագայում՝ Բագրատունիների օրոք, եւս չի կորցնում իր ռազմավարական նշանակությունը՝ դառնալով Ատրպատականից արշավող արաբական զորքի առաջխաղացումը կասեցնող Ամբերդ—Կոշ—Աշնակ—Թալին պաշտպանական համակարգի օղակներից մեկը*[10]*։*

Աշնակ 3։ *Ամրոցը գտնվում է համանուն գյուղից 1 կմ հարավ-արեւելք՝ Ջրաղացների կիրճի ձախ ափին, որն անցնում է գյուղի արեւելյան կողմով (աղ. 1, նկ. 3)։ Ամրոցը տեղակայված է բաց, բնականորեն անպաշտպան տեղանքում՝ բացառությամբ արեւմտյան հատվածի։ Այն շրջապատված է կոպտատաշ տուֆով շարված պարսպով, որի համար կապակցող նյութ է ծառայել կավից ու մանր քարերից կազմված շաղախը։ Պարսպի լայնությունը շուրջ 2,6 մ է, իսկ պահպանված բարձրությունը՝ 0,8 մ։ Հատակագծում ուղղանկյուն ամրոցը զբաղեցնում է շուրջ 0,5 հա մակերես։ Ամրոցի ներսում նկատելի են ուղղանկյուն հատակագծով բնակելի կառույցների հետքեր։*

---

[8] *Նշվ. աշխ., էջ 67—73։*

[9] *«ԵՂԻՇԷԻ Պատմութիւն Վարդանանց» (այսուհետ՝ Եղիշէ), Թիֆլիս, 1913, էջ 101։*

[10] Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Անբերդ, Երեւան, 1978, էջ 20։*

Դաստակերտ: *1988 թ. ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի Կաթնաղբյուրի արշավախումբը (ղեկ.՝ Ե. Ասատրյան, ճարտարապետ՝ Լ. Կիրակոսյան) պեղումներ է իրականացրել «Դաստակերտ» անվանված հուշարձանի տարածքում, որը գտնվում է «Զաքարի բերդ» ամրոց-բնակավայրի մոտակայքում։ «Դաստակերտ» հուշարձանը տեղակայված է հրվանդանի վրա եւ իրենից ներկայացնում է հյուսիս-հարավ ուղղվածությամբ 32 x 47 մ չափի մի համալիր։ Արտաքինից ուրվագծվում են մեկ տասնյակից ավելի սենյակների պատերը (աղ. 1, նկ. 4)։ Պեղումներով հայտնաբերվել են իրար կպած փոքր շինությունների պատկանող առանձին հատվածներ, որոնց պատերը (պահպանված բարձ.՝ 0,6—0,7 մ, լայն.՝ 1,5 մ) կառուցված են կոպտատաշ տուֆաքարերով, եւ զրահապատ շարվածքի արանքները լցված են կավահողե միջուկով։ Շինությունների պատերը չունեն հիմք։ Երկու կողմերի պարիսպների հիմքերը դրված են նախօրոք հարթեցված ժայռի վրա, իսկ եղած անհավասարությունները լցված են կավահողի եւ խճի շաղախով։ Պարսպապատերի բացված հատվածների մակերեսի վրա հետագա վերակառուցումների հետքերը բացակայում են։ Հարավային պատի արեւելյան հատվածն ունի ուղղանկյուն որմնահեց (1,8 x 1,7 մ), որից աջ ամրոց-բնակավայրի մուտքն է։ Այն ամբողջությամբ պեղված չէ, սակայն նրա սկզբնական լայնությունը խիստ նեղացրել են կողային պատերը հաստացնելու պատճառով, որն ակնհայտորեն արվել է զարգացած միջնադարում՝ բնակավայրի կործանումից հետո։ Ուշ շրջանի վերոհիշյալ շարվածքի մեջ հայտնաբերվել են սրբատաշ քարեր, որոնց մակերեսին փորված են շրջանակի մեջ առնված հավասարթեւ խաչ եւ «Ռ» տառը։ Փաստորեն «Դաստակերտ» ամրոց-բնակավայրի պեղումներից հայտնաբերված հնագիտական գտածոները եւ շերտագրական դիտարկումները փաստում են, որ հայտնաբերված վաղմիջնադարյան ժամանակաշրջանի այս կառույցը սերտորեն առնչվում է Զաքարի բերդի հետ։ Հուշարձանի կործանվելուց հետո նրա տարածքը եւ շրջակայքը վերաբնակեցվել են զարգացած միջնադարում*[11]։

Արուճի ամրոց: *1980—1985 թթ. ԵՊՀ հայագիտական կենտրոնի հնագիտական արշավախմբի (ղեկ.՝ Բ. Սադոյան)՝ Արուճում իրականացրած հնագիտական պեղումների արդյունքում բացվել է վաղմիջնադարյան Արուճ բնակավայրի ամրոցի պարսպի մի հատվածը։ Ամրոցը զբաղեցնում է շուրջ 1 հա տարածք, ունի ուղղանկյուն հատակագիծ եւ Արուճի*

[11] Е. Асатрян, *նշվ. աշխ., էջ 18։*

հուշարձանախմբից հեռու է մոտ 2 կմ՝ դեպի հարավ-արեւմուտք (աղ. 2, նկ. 1)։ Ամրոցից առայժմ պեղված է 100 մ երկարությամբ եւ 5 մ լայնությամբ պարսպի երկու հատված։ Պարսպից բացված է քառակուսի հատակագծով վեց աշտարակ (չափերը՝ 4 x 4 մ), որոնցից 5-ը պեղված են, իսկ 6-րդը գտնվում է գյուղական տան պատի մեջ (աշտարակներն իրարից հեռու են 25 մ)։ Աշտարակների համար հիմք է ծառայել հարթեցված ժայռը։ Միջնաբերդը տեղակայված է պարսպի հյուսիսարեւմտյան անկյունում։ Կամարակապ մուտքը արեւելյան կողմից է (2010 թ. ձմռանը կամարը փլվեց) (աղ. 2, նկ. 3, 4)։ 2012 թ. Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը Ֆրանսիական «Անի-Պեմզա» արշավախմբի հետ համատեղ հետազոտական աշխատանքներ իրականացրեց Արուճի ամրոցում՝ փորձելով պարզել կառույցների ժամանակագրական եւ գործառութային կապերը (աղ. 2, նկ. 2)։

Ելնելով ամրոցի պարսպապատի կառուցվածքային եւ ճարտարապետական առանձնահատկություններից՝ այն թվագրվում է վաղ միջնադարով։ Հավանական է, որ ի թիվս այլ ամրոցների՝ 451 թ. այս ամրոցը եւս գրավել ու ավերել է Վասակ Սյունին[12]։

Հնագետ Բ. Սադոյանի կարծիքով՝ այս պարիսպը կառուցվել է Արշակունիների օրոք եւ թվագրում է Գ.–Ե. դդ.։ Նրա թվագրությունը հիմնված է հետեւյալ փաստերի վրա.

ա. պարսպի վրա վարպետի նշանների բացակայությունը,

բ. կատարված աշխատանքի ծավալն ու որակը, տաճարից ու պալատից հեռու գտնվելու հանգամանքը,

գ. Հայաստանի ամրաշինությանը ոչ բնորոշ ամրոցի դիրքը։

Հեղինակը գրում է. «Պետք է ինչ-որ կերպ փոխհատուցվեր նախ՝ իր հզոր պաշտպանական համակարգով, կանոնավոր եւ կուռ կառուցվածքով եւ ապա՝ մեծաքանակ զորական ուժի առկայությամբ, ինչը ամբողջովին համապատասխանում է արքունի զորքերի զորակայանի դերին ու նշանակությանը»[13]։ Նշենք, սակայն, որ պաշտպանական կառույցների վրա վաղ միջնադարում վարպետի նշաններ մինչ այժմ հայտնի չեն, իսկ երկրորդ եւ երրորդ փաստարկները կարելի է հավանական համարել նաեւ Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանի համար։ Այսպիսով, համամիտ լինելով Բ. Սադոյանի այն տեսակետի հետ, որ ամրոցը կառուցված

[12] ԵՂԻՇԷ, *էջ 101։*

[13] Բ. ՍԱԴՈՅԱՆ, *Արուճի վաղ միջնադարյան հուշարձանները, ՊԲՀ, 1985, №4, էջ 166։*

է Արշակունյաց շրջանում, կարծում ենք, որ պահպանված կառույցները պատկանում են Գրիգոր Մամիկոնյանի ձեռնարկած շինարարական ծավալուն գործունեությանը. «Եւ ապա հաստահեղոյս քարամբք եւ կրով պարսպեալ՝ կարգեալ է տուն բնակութեան իւրոյ»[14]։

Իշխանական ամրոցների խմբին է պատկանում նաեւ Օշականի «Դիդի կոնդ» կոչվող բլրի վրա տեղակայված դղյակը։ Վաղ միջնադարում Ամատունի նախարարներն իրենց տիրույթը հանդիսացող Օշականում շինարարական աշխատանքներ են կատարել։ Ուրարտական ամրոցի հատակագծային լուծումները պահպանելով հանդերձ՝ սենյակներում կառուցվել են լրացուցիչ միջնորմեր, որոնք այլափոխել են դրանց ներքին ծավալները։ Ամրոցի հարավարեւմտյան մասում առկա են միջնադարյան կառույցների հետքեր եւ փոքրիկ ջրամբարներ։ Անկասկած, Եղիշեի հիշատակած «զամուրն Օշական»-ը[15] վերաբերում է «Դիդի-կոնդ» ամրոցին, որն այդ շրջանում կարեւոր դեր էր խաղում Արարատյան դաշտի հյուսիսային հատվածի պաշտպանական համակարգում[16]։

Բազմաբերդ 1։ *Ամրոցը տեղակայված է Սասնաշեն եւ Բազմաբերդ գյուղերի միջեւ։ Ամրոցի ընդհանուր մակերեսն իրեն հարող բնակավայրի հետ կազմում է շուրջ 1 հա։ Հատակագծով այն ոչ կանոնավոր քառանկյուն է (աղ. 2, նկ. 5)։ Կառուցված է մեծ քարերով, չոր շարվածքով (աղ. 2, նկ. 6)։ Պարիսպների բարձրությունը տեղ-տեղ 10—12 մ է։ Դեռներեսին նկատվում են ուղղանկյուն հատակագծով բնակելի համալիրների հետքեր։ Հնագիտական նյութի հետազոտությամբ հուշարձանը երկշերտ է։ Առաջինը վերաբերում է հելլենական շրջանին եւ թվագրվում Ք. ա. Բ.—Ա. դդ., իսկ երկրորդ շերտը՝ վաղմիջնադարյան է[17]։*

Շղարշիկ։ *Լեռնային գյուղը ընկած է Կաթնաղբյուրից 5 կմ դեպի հյուսիս։ Գյուղի թիկունքում գտնվող բլրի գագաթին է տեղակայված «Ղալաչա» կոչվող ամրոցը։ Այն քառանկյուն հատակագծով փոքր ամրոց է, որի մուտքը հարավային կողմում է՝ պահպանված քարե դռնով։ Ամրոցի*

---

[14] *«ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԵՑԻՈՅ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 91։*

[15] ԵՂԻՇԷ, *էջ 100։*

[16] С. Есаян, А. Калантарян, Ошакан I, Основные результаты раскопок 1971—1983 гг., Археологические раскопки в Армении №18, Ереван, 1988, с. 12—17, А. Калантарян, У. Мелконян, А. Жамкочян, Ф. Бабаян, А. Пилипосян, А. Канецян, Результаты раскопок 2002 г. в Ошакане, Археология, этнология и фольклористика Кавказа, материалы международной конференции, Ереван, 2003, с. 112—121.

[17] А. Акопян, Работы в Талинском районе, Археологические открытия 1985 года, Москва, 1987, с. 557.

պատերը շարված են տուֆե կոպտատաշ քարերով, որոնք ամրացված են կրաշաղախով։ Պատերը պահպանված են մոտ 2 մ բարձրությամբ։ Հավանաբար այն ունեցել է պահակային նշանակություն եւ թվագրվում է՝ վաղ միջնադար[18]։

«Ջուլհակ բլուր»։ *Ամրոցը գտնվում է բարձր բլրի գագաթին (աղ. 3, նկ. 1)։ Տակավին նկատելի են բլուրը շրջափակող, քառակուսի որմնահեցերով, կանոնավոր քարե շարվածքով պարիսպների հետքերը (աղ. 3, նկ. 2)։ Ամրոցն ունի միջնաբերդ, որը մի այլ պարսպով առանձնացված է ամրոցի ընդհանուր հատվածից։ Այն հատակագծում 65 x 45 մ չափերով անկանոն ուղղանկյուն է։ Բնակավայրը տարածվում է դեպի հյուսիս-արեւմուտք եւ զբաղեցնում է 0,8 հա տարածություն։ Ամրոցի մուտքը գտնվում է հարավարեւմտյան անկյունում։ Պարիսպներով ամփոփված տարածքում նկատելի են ուղղանկյուն հատակագծով մեծ շինությունների մնացորդներ։ Բլրի ստորոտին եւս առկա են պարիսպների, ինչպես նաեւ բնակելի շինությունների հետքեր։ Ըստ վերգետնյա հետազոտությունների՝ ամրոցն ունեցել է եռաշարք պարիսպներ[19]։*

Ռելիեֆին համահունչ հատակագծով ամրոցներ

Աշնակ 2։ *Այս ամրոցը տեղացիների շրջանում հայտնի է նաեւ Աշոտ Երկաթ անվամբ։ Կառուցված է գյուղից 2 կմ հարավ-արեւելք՝ Արարատյան դաշտի եւ նախալեռնային գոտու միջեւ, երկու ձորերի միացումից առաջացած հրվանդանի վրա (աղ. 3, նկ. 3)։ Ամրոցն զբաղեցնում է շուրջ 1 հա տարածք, որը բոլոր կողմերից շրջապատված է ռելիեֆին հարմարեցված պարիսպներով։ Հյուսիսային՝ համեմատաբար անպաշտպան հատվածում պարիսպներն իջնում են դեպի ձորը եւ ավարտվում են համեմատաբար խոշոր քարերով շարված քառակուսի աշտարակով։ Արեւելյան հատվածում պարիսպները կրկնակի են։ Դրանք ունեն միմյանցից 10 մ հեռավորության վրա գտնվող, հատակագծում ուղղանկյուն որմնահեցեր։ Պատերը կառուցված են եռաշերտ եղանակով (աղ. 3, նկ. 4)։ Մուտքից ոչ հեռու սկսվում է գաղտնի անցումը, որով հնարավոր է իջնել մինչեւ կիրճ։ Ամրոց տանող մուտքը գտնվում է ամենաանառիկ՝ հարավային հատվածում։*

[18] Ե. Ասատրյան, *նշվ. աշխ., էջ 48։*
[19] *Նշվ. աշխ., էջ 16։*

Մուտքից սկսվող գլխավոր փողոցը բաժանվում է առանձին ճյուղերի, որոնց երկայնքով տեղակայված են ուղղանկյուն հատակագծով, միանման չափերով բնակելի համալիրները։ Դրանց առաջին շարքը տարածվում է պարիսպների ողջ երկայնքով՝ մի կողմում ունենալով պարիսպներին հպված պատեր։

Աշնակ 4: *Ամրոցը գտնվում է Աշնակ գյուղից 1,5 կմ դեպի հյուսիս՝ Ջրաղացների կիրճի աջ ափին։ Կառուցված է երկու կիրճերի միացման տեղում առաջացած հրվանդանի վրա (աղ. 3, նկ. 5)։ Այն տեղակայված է հրվանդանի ամենաբարձր հատվածում՝ զբաղեցնելով շուրջ 0,5 հա մակերես, իսկ ողջ շրջագծով՝ շուրջ 130 մ, շրջապատված է պարիսպներով, որոնք ամրացված են հատակագծում ուղղանկյուն որմնահեցերով։ Համեմատաբար անպաշտպան՝ հյուսիսային կողմում կառուցված են մոտ 20 մ երկարությամբ կրկնակի պարիսպներ, որոնք շարված են տարբեր մեծության կոպտատաշ տուֆով, իսկ որպես կապակցող նյութ՝ հողից եւ մանր քարերից կազմված շաղախն է։ Պարիսպն ունի 1 մ լայնություն եւ պահպանված է 1 մ բարձրությամբ (աղ. 3, նկ. 6)։ Ամրոցի մուտքը հարավային՝ անառիկ կողմում է։ Ներսում նկատելի են բնակելի, ուղղանկյուն հատակագծով կառույցների հիմքերը, որոնց պատերը հպված են պարսպին։ Կոպտատաշ տուֆով եւ ամրացված հողե շաղախով կառուցված շինությունների հետքեր նկատվում են նաեւ ամրոցի պարիսպներից դուրս։ Վերգետնյա նյութի ուսումնասիրությամբ ամրոցը թվագրվում է ուշ անտիկից վաղ միջնադար անցումային ժամանակաշրջանով։*

Ջորս անկյուններում կիսակլոր աշտարակներով դղյակ-ամրոցներ

1. Կոշ: *Բնակավայրը կապվում է Տիրան թագավորի (339—350 թթ.) անվան հետ։ Կույր թագավորի կյանքի վերջին շրջանի իրադարձությունների հետ կապված՝ պատմահայր Մովսես Խորենացին այն հիշատակում է որպես ավան*[20]*։ Բնակավայրի մասին գրավոր ավելի ուշ աղբյուրներում որեւէ հիշատակում չկա։ Դղյակի ավերակները գտնվում են Կոշ գյուղից հյուսիս՝ Արագած լեռան հարավային լանջին։ Բլուրը, որի վրա կառուցված է դղյակը, շրջակայքի հանդեպ ունի բարձր դիրք՝ ապահովելով ամրոցի*

[20] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 281—283։

բնական անառիկությունը եւ շրջակա տարածքի լավ տեսանելիությունը (աղ. 4, նկ. 1)։

Կոշը քառանկյուն հատակագծով (չափերը՝ 25,5 x 20,5 մ), չորս անկյուններում կիսակլոր աշտարակներ ունեցող դղյակ-ամրոցների վաղմիջնադարյան լավագույն օրինակներից է, որոնց վաղագույն տեսակներից են Հացավանը[21] եւ Դիտակը[22]։

Պահպանելով վաղմիջնադարյան դղյակի հատակագծային պատկերը՝ զարգացած միջնադարում (ԺԳ.–ԺԴ. դդ.) կառույցը վերաշինվել է սրբատաշ կարմրավուն տուֆով եւ կրաշաղախով։ Այդ մասին Թ. Թորամանյանը գրում է. «...գեղեցիկ կարմրագույն քարերով, սակայն տեղ-տեղ դեռ երեւում են պատեր եւ պատերի մասեր, որոնց գոյությունը շատ հին է եղած, ավելի հին, քան Ժ. դարը, եւ այս հին մասերին քարերը ոչ միայն տարբեր գույնով են համեմատել նորագույն նորոգության քարերին, այլեւ շարվածքն ու քարերի չափերը բոլորովին տարբեր են»[23]։ Դղյակի կամարաձեւ մուտքը տեղակայված է հարավային պարսպապատի արեւմտյան անկյունից 4 մ դեպի արեւելք (լայնությունը՝ 0,25 մ, բարձրությունը՝ 1,37 մ)։ Մուտքը բացվել է վերակառուցման ժամանակ, քանի որ գտնվում է վաղմիջնադարյան շերտից վերեւ՝ հատակից մոտ 0,7 մ բարձրության վրա։ Այժմ պահպանված բարձրությունները հասնում են 2,2 մ[24]։ Քանի որ դղյակը հնագիտական ուսումնասիրության չի ենթարկվել, ուստի ներքին կառույցների հատակագծային հորինվածքի մասին որոշակի դատողություններ անելն առայժմ անհնար է։

Ընդհանրապես, կլոր կամ կիսակլոր աշտարակների կիրառումը առաջին անգամ հանդիպում է պարթեւական ամրաշինության մեջ Ա. դ. կեսերից (Քտեսիֆոն, Խաթրա, Ֆրաասպա՝ Թախտ-ի-Սուլեյման)։ Գ. Կոշելենկոյի կարծիքով՝ հետագայում հատակագծում կլոր աշտարակներն իրենց

---

[21] Գ. Տիրացյան, *Հացավան ամրոցի 1961 թ. պեղումները, Տեղեկագիր, 1962, №11, էջ 79–84, նույնի, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները, Տեղեկագիր, 1963, №12, էջ 103–110, նույնի, Հացավան ամրոցի 1963 եւ 1965 թթ. պեղումների նյութերից, ՊԲՀ, 1968, №1, էջ 282–291։*

[22] Ֆ. Տեր-Մարտիրոսով, *Դիտակի եւ Տաճարաբակի հետախուզական պեղումներ, ՀՍՍՀ-ում 1975–1976 թթ. հնագիտական հետազոտություններին նվիրված զեկ. թեզ., Երեւան, 1977, էջ 30–31 ։*

[23] Թ. Թորամանյան, *Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հտ. Բ., Երեւան, 1948, էջ 234։*

[24] Լ. Կիրակոսյան, *Կոշի վաղ միջնադարյան դղյակը, Հայաստանի հանրապետությունում 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երեւան, 1991, էջ 107–108։*

ազդեցությունն են թողել Սասանյան շինարվեստում, հավանաբար նաեւ Բյուզանդական պաշտպանական համակարգում[25]։

Դ. դարից սկսած՝ հռոմեացիները հարավային Հայաստանում եւ հյուսիսային Միջագետքում՝ Սինգառայում, Դառայում, Ամիդում, սկսում են հաճախ օգտագործել կիսակլոր աշտարակների շինարվեստը[26]։ *Այդ շրջանում հռոմեացիների կառուցած Թեոդոսոպոլիսի (Կարին) կլոր աշտարակներով պարիսպների մասին Մովսես Խորենացին գրում է. «Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս եւ մանունս բղխեալ՝ անդ ետեղագրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ խոր փոսիւ՝ անդնդալիր հաստատեաց զհիմունս պատուարին. եւ ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց, յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց ի պատիւ Թէոդոսի։ Եւ ի նմանէ եւ անդր շինեաց աշտարակս ժայռաւորս, իբրեւ զնաւացռուկս, եւ առանցս գոգաւոր խորշիւք, որք ընդդէմ հային լերինն։ Սապէս եւ ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արեւելից եւ արեւմտից կանգնեաց աշտարակս բոլորաձեւս»*[27]։ *Հետագա դարերում ինչպես բուն Հայաստանում (Անիի Սմբատյան պարիսպներ, Կարս, Տիգնիս, Բջնի, Դաշտադեմ, Բաղաբերդ, Սուլեմաբերդ եւ այլն), այնպես եւ Կիլիկիայում (Անարզաբա, Հռոմկլա, Սիս, Կամարբերդ եւ այլն*[28]*) ամրաշինության մեջ սկսեցին լայնորեն կիրառվել կլոր կամ պայտաձեւ հատակագծով աշտարակները։ Նշենք նաեւ, որ այս շրջանում ամրոցների վերածվեցին մի շարք եկեղեցիներ, որոնց պարիսպները եւս անկյուններում ավարտվում են կլոր աշտարակներով։ Այսպիսով, կլոր աշտարակները թեեւ հայտնի են Հայաստանի սահմաններից դուրս, սակայն հայ ճարտարապետների եւ վարպետների կողմից դրանք աստիճանաբար զարգացվել ու կատարելագործվել են՝ դառնալով հայկական ամրոցաշինության բնորոշ գծերից մեկը։*

Ճարտարապետական հորինվածքով եւ շինարարական եղանակով քառանկյուն դղյակների տեսակին են պատկանում նաեւ Արագածոտն գավառի Վարդենուտի եւ պատմական Նիգ գավառի Երնջատափի վաղմիջնադարյան ամրոցները, որոնք եւս Միջնաշխարհը պաշտպանող ամրոցների

---

[25] Г. А. Кошеленко, Парфянская фортификация, Советская археология, 1963, т. II, с. 71.

[26] A. Berkyan, The art of fortification in Medieval Armenia, *Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում, հ. 2, զեկ. թեզ., Երեւան, 1978, էջ 155։*

[27] *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», էջ 339։*

[28] О. Халпахчьян, Композиционные особенности планировки оборонительных сооружений Армении, Архитектурное наследство, Москва, 1972, с. 157.

համակարգի բաղկացուցիչ մաս են կազմել։ Ուշագրավ է, որ Միջին Ասիայում նմանօրինակ հատակագիծ ունեն նաեւ պաշտամունքային կառույցները, որոնք սահմանային գոտիներում իրականացնում էին նաեւ պաշտպանական գործառույթ[29]։

Վարդենուտ։ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը 1986–1989 թթ. պեղեց Վարդենուտ գյուղի միջնադարյան դղյակը[30]։ Այն տեղակայված է գյուղի արեւմտյան մասում գտնվող բնական բարձունքի գագաթին՝ ընդգրկելով շուրջ 400 մ² մակերես։ Ուղղանկյուն հատակագծով դղյակի՝ մինչեւ 1,5 մ բարձրությամբ պահպանված որմերը կառուցված են արտաքուստ մեծ, սրբատաշ, կոփածո, ներքուստ՝ կոպտատաշ, ոչ մեծ չափերի որձաքարերով, որոնք կապակցված են կրաշաղախով (աղ. 4, նկ. 2)։ Չորս անկյուններում տեղակայված են հզոր, կլոր աշտարակները (արտաքին տրամագիծը 7 մ) (աղ. 4, նկ. 3)։ Ամրոցի մուտքը արեւելյան կողմից է։ Կառույցի կենտրոնում բացվել են երկայնական, արեւելք-արեւմուտք առանցքով, երկու հզոր մույթերի հիմքեր (1,4 x 1,4 մ), որոնցով ներքին տարածությունը երկու հավասար մասերի է բաժանվում։ Մույթերը կրել են առաջին հարկի ծածկը։ Դղյակի երկհարկանի լինելու կռվան են հանդիսանում նաեւ պեղումներով բացված կառույցի՝ մինչեւ 3,5 մ լայնություն ունեցող պատերը, կամարների, քիվերի, պատուհանների, որմնասյուների բազալտե եւ տուֆե սրբատաշ քարերը[31]։ Ներքուստ՝ դղյակի հարավային որմին կից, ամբողջովին բացվել է կոփածո բազալտե մեծ քարերով շարված եւ անջրթափանց դարձնելու նպատակով կրաշաղախով երեսապատված ջրամբարը։

Երնջատափի դղյակ։ Հուշարձանը գտնվում է Քասախ գետի ձախ ափին՝ երկու ձորերի միախառնումից առաջացած հրվանդանի վրա, որի շուրջ պահպանվել են ընդարձակ՝ շուրջ 0,88 հա պարսպափակ

[29] «Археология». Средняя Азия и дальний Восток в эпоху средневековья. Средняя Азия в раннем средневековье, М., 1999, с. 84, 88, табл. 40/1.

[30] Գ. Կարախանյան, Հ. Մելքոնյան, Վարդենուտի դղյակը, Հայկական ՍՍՀ-ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1987, էջ 54–55։

[31] Գ. Կարախանյան, Հ. Մելքոնյան, Վարդենուտ (պեղումների արդյունքները), Հայկական ԽՍՀ-ում 1987–1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1989, էջ 80–81, Տես նաեւ, Անբերդի եւ Վարդենուտի պեղումների արդյունքները, ՀՀ 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Երեւան, 1991, էջ 111–112։

տարածք զբաղեցնող բնակավայրի ավերակները[32]։ Ամրոց-բնակավայրը կարեւոր ռազմավարական նշանակություն է ունեցել՝ հսկելով Քասախի կիրճը եւ գետանցումը։ Միջնաբերդը հատակագծում շեղանկյուն է՝ 40 x 38 մ չափերով։ Պարսպապատերը լավ պահպանված են եւ բոլոր չորս անկյուններում ունեն կլոր աշտարակներ։ Հյուսիսարեւելյան պարսպից բացի, մնացած բոլոր պարիսպներն ունեն ամրոցի ներքին բակի շուրջ դասավորված կցակառույցներ, իսկ հյուսիսարեւմտյան պարսպին կից շինություններ են կառուցված նաեւ արտաքին ձորահայաց կողմում։ Ամրոցի պարիսպները շարված են եռաշերտ շինարարական եղանակով։ Կառույցների պատերը հիմնականում շարված են միջին մեծության տուֆե խորանարդներով, արանքում քարահողային լիցք է, իսկ կցակառույցների որոշ միջնապատեր ունեն վաղ միջնադարին բնորոշ եղեւնաձեւ շարվածք։ Միջնաբերդի ներսում պահպանված շինությունները կառուցված են միասնական հատակագծային հորինվածքով, եւ բոլոր մուտքերը բացվում են դեպի ներքին՝ ընդարձակ բակը։ Քանի որ ներքին բակի ընդարձակությունը համահնչուն չէ պարսպակից շինությունների խիտ կառուցապատմանը, համարվում է, որ բակում եղել է ինչ-որ շինություն[33]։ Կարելի է ենթադրել նաեւ, որ ընդարձակ բակը ծառայել է զորահավաքի համար։

Նման դղյակ-ամրոցները պաշտպանությունը կազմակերպող կենտրոններ էին՝ նախատեսված կարճատեւ մարտերի համար եւ տեղավորել են 25—30 զինվոր[34]։ Պատահական չէ, որ դեռեւս ԺԹ. դարում Հ. Շահխաթունյանցը Վարդենուտի դղյակի համար նկատել է. «Անդր եւս քան զայս մատուռն ի բարձր տեղւոջ է ամրոցիկ ինչ յորձաքար կռանակոփ վիմաց եւ ի չորեսին անկիւնսն չորք հաստատուն բրգունք կրաձոյլք. եւ որպէս նկատի՝ է գործ հին նախնի հայոց»[35]։ Նման դղյակ-ամրոցները տարածված էին ոչ միայն Միջնաշխարհում, այլեւ Հայաստանի այլ գավառներում։ Մասնավորապես, պատմական Վարաժնունիք գավառում գտնվող Ծաղկաձոր

---

[32] Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. ՀՈԲՈՍՅԱՆ, *Երնջատափի միջնադարյան բնակավայրի 1988 թ. պեղումները, Հայկական ԽՍՀ-ում 1987—1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկ.թեզ., Երեւան, 1989 թ., էջ 96—97։*

[33] Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, *Երնջատափ վաղ միջնադարյան ամրոց-բնակավայրը, ԼՀԳ, 1990, №9, էջ 97։*

[34] Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, *Մեծ եւ Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, ՊԲՀ, 1986, №4, էջ 145—146։*

[35] Հ. ՇԱԽԱԹՈՒՆՅԱՆՑ, *Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, հ. 2, 1942, էջ 168։*

բնակավայրում հետազոտվել է «Բերդի գլուխ» հնավայրը։ Այստեղ հայտնաբերվել են բազալտե քարերով շարված ամրոցի մոտ 1,5 մ պահպանված պարսպապատերը։ Իսկ պարսպի հյուսիսարեւմտյան անկյունում նկատելի են շրջանաձեւ աշտարակի մնացորդներ[36]։

Շրջանաձեւ հատակագծով ամրոցներ

Աշնակ 1: *Ամրոցը գտնվում է Աշնակ գյուղի կենտրոնական մասում, եւ նրա տարածքի մեծ մասը այժմ ծածկված է ժամանակակից տներով ու տնտեսական տարբեր բնույթի շինություններով։ Ամրոցը կառուցված է հարթ տեղանքում, եւ անառիկությունը հիմնականում ապահովել են շինության պաշտպանական կառույցների միջոցով (աղ. 4, նկ. 4)։*

Քանի որ Իրանի եւ Միջագետքի մի շարք հարթավայրային քաղաքներ ունեն շրջանաձեւ կամ շրջանին մոտեցող հատակագծեր (Միջագետքում՝ Խաթրան եւ Քտեսիֆոնը, Իրանում՝ Ֆիրուզաբադը, Դարաբգիրդը, Ֆրաասպը, Թախտ ի Սուլեյման եւ Մերվը՝ Միջին Ասիայում), ուստի ենթադրվում է, որ հարթավայրային պայմաններում շրջանը պաշտպանական լավագույն հորինվածքն է։ Գ. Տիրացյանի ենթադրությամբ՝ հարթ տեղանքում կառուցված Վաղարշապատ քաղաքը նույնպես կառուցվել է շրջանաձեւ հատակագծով[37]։ Վաղարշապատ քաղաքի հատակագծի վերաբերյալ կա մեկ այլ կարծիք եւս։ Այսպես, Հ. Հակոբյանը, դիտարկելով մի շարք հանգամանքներ, մասնավորապես, որ Վաղարշապատն սկզբնապես կառուցվել է որպես հռոմեական ճամբար, եւ այն համեմատելով հռոմեացիների կառուցած մեկ այլ ճամբարի՝ Սատաղի հետ, եզրակացնում է, որ «... հռոմեական լեգեոնների կայանները կառուցվում էին հարթ տեղանքում, քառանկյունու ձեւով։ Աշխարհագրական հաջող դիրքի շնորհիվ նրանք աստիճանաբար վերածվում էին ընդարձակ բնակավայրերի՝ դառնալով տեղական բնակչության հետ տնտեսական եւ մշակութային փոխհարաբերությունների նշանակալից կետեր»[38]։ Ուսումնասիրողներից ոմանք շրջանաձեւ ամրոցների նախատիպ են համարում քոչվորների՝ հատակագծում

---

[36] Գ.Սարգսյան, Հ.Մելքոնյան, *Երկու նորահայտ ամրոց Ծաղկաձորում, Հայ արվեստ, 2007, №3—4, էջ 32։*

[37] Г. Тирацян, К вопросу о градостроительной структуре и топографии Древнего Вагаршапата, ИФЖ, 1977, №2, с. 88—91.

[38] Հ. Հակոբյան, *նշվ. աշխ., էջ 154։*

կլոր ճամբարները[39]։ Գ. Տիրացյանը, համամիտ չլինելով այս կարծիքի հետ, գտնում է, որ դա սխալ է հատկապես Արեւմտյան Իրանի եւ Միջագետքի քաղաքների համար։ Նա ընդունում է է. Պորադայի ենթադրությունն այն մասին, որ նման շրջանաձեւ հատակագծերի համար նախատիպ հանդիսացել են ասորեստանյան ռազմական ճամբարները[40]։

Կարծում ենք, որ երկու տեսակետն էլ հավանական կարող են լինել, քանի որ հարթավայրային տարածքներում նման հատակագծով ամրոցի պաշտպանունակությունն ավելի արդյունավետ է, հետեւաբար նման հատակագծով պաշտպանական համակարգերը կարող էին առաջանալ իրարից անկախ, տարբեր տարածաշրջաններում։

Արագածոտնի պաշտպանական համակարգի մեջ մտնող բազմաթիվ ամրոցներ դեռ ուսումնասիրված չեն, իսկ մի քանիսը հետազոտված են վերգետնյա նյութի եւ հետախուզական փոսորակների միջոցով ստացված տեղեկությունների շրջանակներում։ Ուստի առայժմ հնարավոր չէ ներկայացնել դրանց ճարտարապետական, հատակագծային կերպարը եւ գործառութային նշանակությունը։ Նման ամրոց-բնակավայրերից են.

Կաֆավանորի ամրոցը, *որ գտնվում է գյուղից 0,5 կմ հարավ-արեւելք՝ երկու կիրճերի միացումից առաջացած հրվանդանի վրա։ Ըստ ուսումնասիրությունների՝ ամրոցը հիմնադրվել է Ք. ա. առաջին հազարամյակում, այնուհետեւ, հավանաբար, վերակառուցումներով շարունակել իր գոյությունը անտիկ եւ վաղմիջնադարյան ժամանակաշրջանում։*

Դավթաշենի *ամրոցը, որի ավերակները գտնվում են համանուն գյուղից 1 կմ հյուսիս-արեւմուտք՝ ձորի աջ ափին։ Վերջինիս պատերը կառուցված են կոպտատաշ տուֆից եւ պահպանված մոտ 1 մ բարձրությամբ[41]։*

«Նախավկա» *ամրոցը, որը գտնվում է Մաստարա գյուղից դեպի հյուսիս-արեւմուտք՝ մի մեծ, բլրապատ եւ ձորակներով հատված սարահարթի հարավարեւմտյան եզրին։ Այն զբաղեցնում է շուրջ 3 հա տարածք, որի պարիսպը կառուցված է կոպտատաշ բազալտե մեծ քարերով, որոնք իրար են միացված հողի եւ մանր քարերի շաղախով (աղ. 4, նկ. 5)։ Պարիսպներն ունեն 4,25—4,90 մ հաստություն, պահպանված բարձրությունը շուրջ 2 մ է։ Ամրոցի պարիսպներն ուժեղացված են ուղղանկյուն որմնահեցերով*

---

[39] R. Ghirshman, Persian art, the Parthian and sassanian dynasties, New York, 1962, p. 34—35, Г. Кошеленко, Культура Парфии, с. 53.

[40] Г. Тирацян, *նշվ. աշխ., էջ 90.*

[41] Ե. Ասատրյան, *Թալինի շրջանի հուշարձանները, էջ 28, 36։*

(երկ.՝ 5,20—5,60 մ) (աղ. 4, նկ. 6)։ Որմնահեցերի հեռավորությունը միմյանցից կազմում է շուրջ 10,02 մ։ Ելնելով կիկլոպյան շարվածքից՝ կարելի է ենթադրել, որ ամրոցը կառուցվել է երկաթեդարյան շրջանում եւ գոյատեւել մինչեւ վաղ միջնադար։ Սակայն այստեղ 1979 թ. Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի եւ ԵՊՀ հայագիտական կենտրոնի միացյալ արշավախմբի կողմից իրականացված հետախուզական աշխատանքների արդյունքում հստակեցվեց ամրոցի թվագրությունը՝ Գ.—Է. դդ.[42]։ Կարճատեւ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Նախավկա» ամրոցը «Լոլո-կոնդ» եւ «Բերդ» կոչված ամրոցների եւ «Դամա» ամրացված բնակավայրի հետ կազմել է որոշակի տարածք վերահսկող ամրոցների պաշտպանական մի համակարգ։

Արագածոտնի վաղմիջնադարյան պաշտպանական համակարգի ուսումնասիրություններն առայժմ նախնական փուլում են, այնուհանդերձ եղած հետազոտությունները կարեւոր տեղեկություններ են հաղորդում Հայաստանի վաղմիջնադարյան ամրաշինական մշակույթի, պաշտպանական համակարգերի փոխհարաբերությունների եւ հիերարխիկ կառուցվածքի, ինչպես նաեւ դրանցում առկա ընկերային-տնտեսական հարաբերությունների մասին։

Այսպիսով, Արագածոտնի վաղմիջնադարյան ամրոցների վերոհիշյալ դիտարկումները ցույց են տալիս, որ պաշտպանական համակարգը բաղկացած չէ միատեսակ օղակներից։ Դրանք տարբեր ռազմավարական պայմաններում համակցված, գործող եւ միմյանց լրացնող մեկ մարմնի առանձին մասեր են։ Որոշ ամրոցներում կյանքը շարունակվել է նաեւ խաղաղ պայմաններում, որի լավագույն օրինակը Զաքարի բերդն է։ Պեղումների արդյունքները հիմք են տվել այն ուսումնասիրող Ե. Ասատրյանին ենթադրելու, որ ամրոցում բնակվող զինվորները խաղաղ ժամանակ զբաղվել են երկրագործությամբ եւ անասնապահությամբ[43]։ Ռազմական ուժը խաղաղ պայմաններում եւս պետության շահերին ծառայեցնելու փորձը լավագույնս օգտագործվել է անտիկ շրջանում՝ Հռոմի կայսրերի կողմից[44]։ Եղած տվյալներով նմանօրինակ ամրոց-բնակավայրեր կարելի է դիտարկել նաեւ Ջուլհակ բլուր եւ Աշնակ 2 ամրոցները։ Մոտավոր հաշվարկներով՝ այս տեսակ ամրոց-բնակավայրերում կարող էր բնակվել 250—300 մարդ[45]։

---

[42] Բ. Սադոյան, *Հետախուզական պեղումներ..., էջ 44—45։*

[43] Е. Асатрян, *նշվ. աշխ., էջ 82.*

[44] Е.Голубцова, Сельская община Малой Азии, III в. до н. э.— III в. н. э., М., 1972, с. 137—138.

[45] Е. Асатрян, *նշվ. աշխ., էջ 80.*

Արքունի (իշխանական) կայազորի համար նախատեսված ամրոցներից են Կոշի տիպի դղյակները, Արուճի, Արմավիրի, Օշականի, Աշնակի ձմեռանոցները։ Եւ պատահական չէ, որ մարզպան Վասակ Սյունին ավերեց նախ արքունի զորակայանները՝ այդպիսով փորձելով կոտրել երկրի պաշտպանական ողնաշարը։ Այդ մասին Եղիշեն գրել է. «...աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին եւ զԵրամայիս եւ զԴրասխանակերտն՝ զմեծ Դաստակերտն, զՎարդանաշատն եւ զամուրն Օշական, զՓառախոտն, զՍարդեանսն, զՅոլակերտն աւան եւ զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն եւ զամենայն ոտն Արագածու»[46]։

Պաշտպանական համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում Մաստարայի «Նախավկայի» տիպի ամրոցները։ Ամենայն հավանականությամբ՝ դրանք իրարից որոշակի հեռավորությամբ կազմել են առանձին փոքր միավոր, որոնք պետք է վերահսկեին ռազմավարական հատուկ նշանակության լեռնանցքները, կիրճերը։

РЕЗЮМЕ

Будучи центральной провинцией страны, Арагацотн, в целом, может быть показательным с точки зрения политических, социально-экономических и духовно-религиозных процессов, происходящих не только в остальных областях Армении, но и странах всего Ближнего Востока. На территории Арагацотна сохранилось множество крепостей (в Талине, Ашнаке, Аруче), а также укрепленные дворцы-замки в Коше, Варденуте, Ошакане. Такое обилие укреплений было обусловлено нестабильностью политической ситуации в стране. В условиях отсутствия централизованной царской власти в стране владетельные князья разных областей были вынуждены организовывать самооборону и строить систему укреплений. Фортификационные сооружения у южного предгорья горы Арагац контролировали центральную часть страны. Одновременно каждая отдельная крепость с окружающими ее более мелкими фортификационными сооружениями представляло собой отдельную оборонительную линию и осуществляло контроль над определенной частью области.

В соответствии с архитектурным планом крепости делятся на следующие типы:

[46] Եղիշէ, էջ 100–101։



1

2

3

4

ԱՂՅՈՒՍԱԿ 1

1



2

3

4

5

6

ԱՂՅՈՒՍԱԿ 2

1

2



3

4

5

6

ԱՂՅՈՒՍԱԿ 3



1

2



3

4

5

6

ԱՂՅՈՒՍԱԿ 4

1. Прямоугольные в плане крепости.
2. Крепости, повторяющие конфигурацию рельефа.
3. Крепости с полукруглыми башнями по четырем углам.
4. Округлые в плане крепости.

SUMMARY

Being situated in the central part of the country, Aragatsotn province has reflected political, spiritual-religious and social-economical processes, which took place not only in other regions of Armenia, but also in countries of the entire Middle East. Aragatsotn province has numerous fortresses, which include: Talin, Ashnak, Aruch city-fortress, as well as Kosh, Vardenut, Oshakan castles. The large number of castles is connected with the unstable and dangerous situation within the country. In the absence of a centralized royal power in the country, the sovereign princes of different regions were forced to organize self-defense and build a system of fortresses. Fortresses near the southern foothills of Mount Aragats controlled the central part of the country. At the same time, each separate fortress with smaller castles surrounding it was a separate defensive unit and exercised control over a certain part of the region.

In accordance with the architectural plan, the fortresses are divided into the following types:

1. Rectangular in terms of a fortress.
2. Fortresses repeating the configuration of the relief.
3. Fortresses with semicircular towers in four corners.
4. Rounded in terms of a fortress.